

ռակութեան համար են ասպարէզ եկել, Ոմն պ. Ֆօգլ, ի ցոլց-  
է դրել քսանի չափ մանկական խծրանքներ, որոնք դիտողի-  
կարեկցութեան զգացումն են շարժում դէպի և նկարչի ողոր-  
մելի վրձինի անդօրութիւնը,

Ընդհանրապէս պատկերահանդէսը աղքատ է և բաւարար  
տպաւորութիւն չի դորժում, բայց և ալնպէս ուրախալի է,  
որ մեր փոքրաթիւն նկարիչներն ալժմ միացել են և ընդհա-  
նուր ոյներով են լայտնում հասարակութեանը, Հերիք է ինչ-  
քան ինտրիգներով կերպուեցին, թող ալժմ ընկերաբար աշ-  
խատեն և կոռւեն միջակութեան դէմ...

Տ.

### ՍԵՆՎԵԼԻՉԻ կարծիքը քեմին ծառայողների մասին.

Նշանաւոր լեհական գրող Սենվելիչը, որ ահա տասը տա-  
րի է համաշխարհակին առաջին վիպասանն է համարւում, իւր-  
բարձր գեղարուեստական երկերից մէկում (Ան երրորդը) հե-  
տեել խորհրդածութիւնն է անում զերասանուէիների և առ-  
հասարակ արտիստների յասին:

Դերասանուէիների մէջ անշուշտ կը գտնուին մարմա-  
պէս անմեղ կանալք, բայց եթէ նրանց կօրսեները կարողա-  
նալին երը և է մատնել իրանց տիրուէիների տենչանքները,  
— նոյն իոկ ամենաանամօթ կապիկը կարող էր կարմրել, իմ  
կարծիքով, իւր մարմնի բոլոր անմազ մասներում:

Բեմը վիշացնում է հոգին, մանաւանդ կանանց հոգին,

Դժուար է պահանջել այն կնոջից, որ ամեն երեկոյ  
պատկերացնում է սէր, հաւատարմութիւն, աղնւութիւն և  
ալին, որ նա վերջի վերջու չունենալ բ'աղդական զիտակցու-  
թիւն թէ ալդ բոլոր առաջինութիւնները միմիան թեմի լար-  
դարութեան պարագաներ են, որոնք մանում են դրամատի-  
քական և բեմական գեղարուեստի շրջանը, բայց չունեն ոչ  
մի կապ կեանքի հետ:

Արոճատի և իրական կեանքի մէջ եղած ահազին տար-  
բերութիւնն էլ աւելի ամրացնում է կանանց մէջ սլդ հալեաց-  
քը, Մրցամը և նախանձը ծափահարութիւնների համար թու-  
նաւորում են սրտի բոլոր ազնուազոյն ձգտումները, Յարատե-  
ընկերակցութիւնը ախնպիսի վիշացած մարդկանց հետ, որպի-  
սիք են զերասանները, գրգռում է նրանց մէջ կրքեր, Անզօ-  
րալի ամենաաներսակ կատուն կարող է կեզտոտուել ալդ պար-  
մաններում, Մրանց կարող է լաղթել միան մեծ տաղանդը  
որ մաքրում է գեղարուեստի բովանոցում, կամ ախնպիսի  
ծալի է ի ծալը էսթեթիկական բնոլթ, որի մէջ չարը չի թա-  
փանցում, ինչպէս ջուրը չի թափանցում կարապի փետուր-  
ների մէջ...

Աս շատ անգամ գիշերով ծխաքարշը բերանիս թէլը առ-  
ջեւ ընկերներիս հետ զրուցել եմ գեղարուեստի աշխարհին  
պատկանող մարդկանց մասին, սկսած նրանց ամենաբարձր  
դասից, ալսինքն բանաստեղծներից և վերջացրած ամենացածր  
դասով, ալսինքն դերասաններով։

Մարդ որի ֆանտազիան զարգացած է աւելի քան հա-  
սարակ մահկանացուներինը, մարդ, որ ուրիշներից աւելի դիւ-  
րազդաց է, աւելի թափանցող միտք ունի, աւելի լախուռն է,  
մարդ, որ երջանկութեան և հաճուքի սահմանում գիտէ բոլորը  
և ծառաւ է ամեն ինչի անսահման ծարաւով —ահա թէ ինչ է  
արտիստը։

Որպէս զի կարողանալ մոլորութեանը լաղթել նա պէտք  
է ունենալ երեք անգամ աւելի զօրեղ բնորթ և կամքի ոլժ,  
քան ուրիշները։ Բայց ինչպէս չը կալ հիմք կարծելու, թէ ա-  
ւելի գեղեցիկ ծաղիկը հենց իւր գեղեցկութեան պատճառով  
կարող է ունենալ փոթորկին աւելի լաջող հանդուրժելու ըն-  
դունակութիւն, քան միւսները —նոյնպէս չը կալ հիմք մաս-  
ծելու, թէ արախստը կարող է ունենալ աւելի հաստատ բնորթ,  
քան հասարակ մարդը։

Ընդհակառակը, կալ պատճառ, որի ուժով արտիստը սո-  
վորաբար աւելի թոլլ բնաւորութիւն ունի. որովհետև նրա  
կենսական որժը կործանուում է այն անդունդում և այն հակա-  
սութիւնների մէջ, որոնք բաժանում են գեղարուեստի սահ-  
մանը առօրեալ իրականութեան սահմանից։

Նա մի հիւանդ թաջուն է, որ մշտական տենդից կրծուե-  
լով մերժ չքանում է մեր հայեացքից թուխպերի ետեռում,  
մերթ իւր չարչարուած թեւերը քաշքում է փոշու և ցեխի  
մէջ Գեղարուեստը նրան ներշնչում է զղուանք դէպի փոշին  
և ցեխը, իսկ կեանքը խլում է նրանից թռիչքի ոլժը։ Ահա  
ինչու ալլքան լաճախ նկատում է արտիստների արտաքին և  
ներքին կեանքը մէջ ալնպիսի հակասութիւն։

Աշխարհը գուցէ և իրաւացի է, պահանջելով նրանցից  
աւելի, քան միւս մարդկանցից և զատապարտելով նրանց,  
բայց Քրիստոսը կը լինի արդարացի, զթալով նրանց..

### ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇիձՈՒԿ ԹՈՐԵՐԻ ԲՈՐՃՈՒՓՄԱՆ ԴԵՄ. Բօլօնի գիտու-  
թեանց ճեմարանի վերջին նկատում պրօֆ. Գվիդո Ցիցցօնին  
մի շատ կարեռ ծանուցում է արել սթոքերի բորբոքման։  
Բժշկութեան նոր եղանակի մասին։ Նա իւր օգնական բժշ.  
Պանիկի հետ մի շարք հետազոտութիւններ է կատարել այն-  
պիսի մի շիճուկ դանելու, որ քիչ կամ շատ հաստատուն լինէր  
լիշեալ հիւանդութեան համար։ Երկար փորձերից լետու նոքա